Հայտարարություն

Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմը հայտարարում է մրցույթ աշխատակազմի կրթության պետական տեսչության հանրակրթության տեսչավորման բաժնի պետական տեսուչի (ծածկագիր՝ 16-3.1-7) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար:

Դիմող Արցախի Հանրապետության քաղաքացիները սույն հայտարարության հրապարակումից հետո 15 օրվա ընթացքում պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1.գրավոր դիմում,

2.քաղաքացիական ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով այդ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի՝ դիպլոմի, աշխատանքային գրքույկի պատճենները՝ բնօրինակների հետ միասին,

3.արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին կամ համապատասխան տեղեկանք,

4.մեկ լուսանկար՝ 3x4 չափսի,

5.անձնագրի պատճենը,

6. արագակար:

Մրցույթը կկայանա 2022 թվականի դեկտեմբերի 27-ին, ժամը 10:00-ին (հասցե՝ ք.Ստեփանակերտ, Թումանյան 48):

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակազմ (հեռ՝. 047.96-19-35):